ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մարտի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №476Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի №214Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվին նախազգուշացնելու մասին» №476Ա որոշմամբ (այսուհետ՝ №476Ա որոշում) երկարաձգվել է «ԶԱՆԳԵԶՈՒՐ-95» արտադրական կոոպերատիվին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրված «Շինուհայր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0191 լիցենզիայի ժամկետը, իսկ որոշման 3-րդ կետով Կոոպերատիվը պարտավորեցվել է վեցամսյա ժամկետում՝ մինչև 2021 թվականի հունիսի 27-ը, Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ, որոնցից և ոչ մեկը չի ներկայացվել,

բ) Կոոպերատիվը 2021 թվականի հունիսի 23-ի №7 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի նախագծային փաստաթղթեր, այդ թվում՝ «ԷԿՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հունիսի 25-ի №83/Հ գրությամբ տրված փորձագիտական եզրակացությունը, հայտնելով սակայն, որ փորձաքննությունը իրականացվել է մասնակի, ենթակա է պարզաբանման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, ինչպես նաև համալիր փորձաքննության անցկացման կամ դրա անհրաժեշտության բացակայության հարցը, ինչից ելնելով՝ խնդրել է ևս վեց ամսով երկարաձգել №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետը,

գ) Հանձնաժողովը №476Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար 2021 թվականի հուլիսի 28-ի №280Ա որոշմամբ (այսուհետ՝ №280Ա որոշում) Կոոպերատիվին նախազգուշացրել է և №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը և, համաձայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված ծանուցագրի՝ №AG034325006AM գծանիշ կոդով առաքանին (№280Ա որոշման պատճենը) Կոոպերատիվին հանձնվել է 2021 թվականի օգոստոսի 7-ին, ուստի №280Ա որոշումը նույն թվականի օգոստոսի 8-ին մտել է ուժի մեջ և 2021 թվականի հոկտեմբերի 8-ից դարձել անբողոքարկելի, սակայն Կոոպերատիվի կողմից տվյալ կետով սահմանված պարտավորությունը դարձյալ չի կատարվել,

դ) Հանձնաժողովը 2021 թվականի դեկտեմբերի 30-ից Կոոպերատիվի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարույթի շրջանակում Կոոպերատիվը 2022 թվականի հունվարի 10-ի գրությամբ ըստ էության ընդունել է թույլ տրված խախտումը և հայտնել, որ Կոոպերատիվը 2021 թվականի հուլիս ամսից նախաձեռնել է Կայանի վերազինման աշխատանքները, իսկ №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության չկատարման պատճառ է հանդիսացել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ Կայանի վերազինման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մի քանի անգամ լրամշակումը: Միևնույն ժամանակ, Կոոպերատիվը հայտնել է, որ ձեռնարկել է բոլոր միջոցները Հանձնաժողովի սահմանած ժամկետում ավարտելու փորձաքննական գործընթացը, սակայն այն դուրս է իր լիազորությունների շրջանակից, քանի որ կարգավորվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և

փորձաքննության մասին» օրենքով, ինչից հետո օրենքով սահմանված կարգով Կոոպերատիվին կտրամադրվի պետական փորձաքննական եզրակացություն,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- Կոոպերատիվը խախտել է №476Ա որոշման 3-րդ կետի պահանջը, այն է՝ սահմանված ժամկետում՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը (№280Ա որոշմամբ ևս վեց ամսով երկարաձգված ժամկետում) չի կատարել պարտավորությունը, իսկ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, քանի որ Կոոպերատիվը №476Ա որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության կատարման համար ունեցել է մեկ տարի ժամանակ, սակայն, ըստ էության բավարար գործուն միջոցներ չի ձեռնարկել,
- Կոոպերատիվի կողմից №476Ա որոշման 3-րդ կետի պահանջի չկատարման արդյունքում, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 10-րդ մասի, առկա է արարքի կրկնակիություն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №476Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար Կոոպերատիվին տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. №476Ա որոշման 3-րդ կետում «մեկ տարվա» բառերը փոխարինել «տասնութ ամսվա» բառերով:
3. Պարտավորեցնել Կոոպերատիվին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը N900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոոպերատիվին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ դրա 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մարտի 2022թ.